

Կ-1032-24.06.2016,27.06.2016-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը, քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում իրենց ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացնելու իրավունք ունեն այն անձինք, որոնք՝

1) հաշվառված են համապատասխան ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում, սակայն դուրս են մնացել այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից.

2) սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմին ներկայացրել են համապատասխան ընտրական տեղամասի ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմում, դիմումը չի մերժվել, սակայն նրանք չեն ընդգրկվել համապատասխան ցուցակում:

Ընտրողների ցուցակներում ընդգրկվելու մասին դիմումների վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցելու քվեարկությանը: Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկելու մասին որոշում կայացնելու դեպքում լիազոր մարմինը տրամադրում է տեղեկանք:

Տեղամասային ընտրական հանձնաժողովին ներկայացման ենթակա՝ քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին լիազոր մարմնի տեղեկանքի ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին լիազոր մարմնի տեղեկանքի հիման վրա ընտրողների ցուցակում լրացում կատարում է տեղամասային ընտրական հանձնաժողովը

քվեարկության օրը՝ սույն օրենսգրքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով՝ լրացուցիչ ցուցակ կազմելու միջոցով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 23-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող» բառերը փոխարինել «Հանրային ծառայող» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 31-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Մինչև հավատարմագրվելու համար դիմում ներկայացնելը Հայաստանի Հանրապետություն գրանցված հասարակական կազմակերպությունները պարտավոր են ընդունել իրենց դիտորդների վարքագծի կանոններ, որոնք պետք է համապատասխան ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և սույն օրենսգրքի կանոնակարգումներին:

Սույն մասում նշված հասարակական կազմակերպություններն իրենց դիտորդների համար կազմակերպում և անցկացնում ընտրական օրենսդրության ու կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ուսուցում:

Հավատարմագրվելու դիմումը պետք է նշում պարունակի կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և ուսուցման մասին:»:

2) 4-րդ մասը «որոշման պահանջներին» բառերից հետո լրացնել «կամ դիմումը չի պարունակում նշում կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման կամ ուսուցում մասին» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 32-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետի երկրորդ պարբերությունը հանել.

2) 4-րդ մասի վերջին նախադասությունը հանել.

3) 5-րդ մասը «31-րդ հոդվածի 5-րդ մասով,» բառերից հետո լրացնել «8-րդ մասով» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1) 1-ին նախադասության «և Հայաստանի Հանրապետությունում գրանցված դիտորդական առաքելություն իրականացնելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների» բառերը հանել.

2) 2-րդ նախադասության «, հասարակական կազմակերպությունների» բառերը հանել:

Հոդված 6. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությունը «անձինք» բառից հետո լրացնել «, մասնագետը» բառով:

Հոդված 7. Օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում, ինպես նաև 14-րդ մասում «9.00-ից մինչև ժամը 9.30-ը» բառերը փոխարինել «9.00-ից մինչև ժամը 11.00-ն» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի վերջին պարբերությունում «9.00-ից մինչև ժամը 9.30-ը» բառերը փոխարինել «9.00-ից մինչև ժամը 11.00-ն» բառերով.

2) 6-րդ մասում «վերջնաժամկետի օրը՝ ժամը 12.00-ից» բառերը փոխարինել «վերջնաժամկետի օրը՝ ժամը 14.00-ից» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի «կամ դիտորդական առաքելություն իրականացնելու» բառերը հանել:

Հոդված 10. Օրենսգրքի 66-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի առաջին նախադասությունը «լիազոր մարմնի կողմից,» բառերից հետո լրացնել «քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը,» բառերով.

2) 2-րդ մասի 6-րդ պարբերությունում «երբ ընտրողն ունի» բառերը փոխարինել «երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի» բառերով:

Հոդված 11. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում՝

1) առաջին պարբերությունում առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցման ժամանակ չի հաջողվել ճանաչել մատնահետքը և գրանցումն իրականացվել է միայն անձը հաստատող փաստաթղթի հիման:»:

2) երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունում «լուսանկարելու այն» բառերից հետո լրացնել «, որից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղեկանքը ստորագրում է և կնքում հանձնաժողովի կնիքով» բառերով.

3) երրորդ պարբերությունում «Վստահված անձանց» բառերից հետո լրացնել «դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին» բառերով, իսկ «ընդհանուր 20 րոպե» բառերը փոխարինել «ընդհանուր 30 րոպե» բառերով.

4) չորրորդ պարբերության «9.00-ից մինչև ժամը 9.30-ը» բառերը փոխարինել «9.00-ից մինչև ժամը 11.00-ն» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ մասում՝

1) «այդ ընտրական տարածքի յուրաքանչյուր 15 000 ընտրողի հաշվարկով» բառերը փոխարինել «ըստ ընտրողների ռեգիստրի այդ ընտրական տարածքում ընդգրկված յուրաքանչյուր 15 000 քաղաքացու հաշվարկով»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Նշված թիվը յուրաքանչյուր ընտրական տարածքի համար հաշվարկվում է հիմք ընդունելով ընտրողների ռեգիստրի թիվը:»:

Հոդված 13. Օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասը 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասում նշված ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է հիմք ընդունելով ընտրողների ռեգիստրի թիվը:»:

Հոդված 14. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն կետում նշված ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է հիմք ընդունելով ընտրողների ռեգիստրի թիվը:»:

Հոդված 15. Օրենսգրքի 115-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածում նշված ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է հիմք ընդունելով ընտրողների ռեգիստրի թիվը:»:

Հոդված 16. Օրենսգրքի 144-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի առաջին նախադասությունը «համապատասխան» բառից հետո լրացնել «, բացառությամբ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու իրավունքը սահմանող դրույթների, որը կարգավորվում է սույն օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխան» բառերով.

2) 3-րդ մասը երկրորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը Գյումրու, Վանաձորի ավագանիների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակները կազմվում են 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի՝ ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան, որոնցում ընդգրկվում են սույն օրենսգրքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

Գյումրու, Վանաձորի ավագանիների, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններին դիտորդական առաքելությունների իրականացնող հասարակական կազմակերպությունների հավատարմագրումն իրականացվում է 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների դիտորդներից որակավորման վկայականներ չեն պահանջվում, իսկ սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը գործում է 2017թ. հունվարի 1-ից:».

3) 14-րդ, 15-րդ և 16-րդ մասերում «2022 թվականի» բառերը փոխարինել «2021 թվականի» բառերով:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ**

h/h	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	3
1.	ՀՀ կառավարություն	<p align="center">Նախագծի 10-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ կետով՝</p> <p align="center">2) 2-րդ մասի 6-րդ պարբերությունում «երբ ընտրողն ունի» բառերը փոխարինել «երբ տեխնիկական սարքավորումում առկա տեղեկություններից պարզվում է, որ ընտրողն ունի» բառերով:</p>	Ընդունված է
2.	ՀՀ կառավարություն	<p align="center">Նախագծի 11-րդ հոդվածը լրացնել նոր 1-ին կետով՝</p> <p align="center">1) առաջին պարբերությունում առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.</p> <p align="center">«Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցման ժամանակ չի հաջողվել ճանաչել</p>	Ընդունված է

		<p>մատնահետքը և գրանցումն իրականացվել է միայն անձը հաստատող փաստաթղթի հիման»:</p> <p>Նույն հոդվածի 2-րդ կետը համարել 3-րդ և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>3) երրորդ պարբերությունում «Վստահված անձանց» բառերից հետո լրացնել «դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին» բառերով, իսկ «ընդհանուր 20 թուպե» բառերը փոխարինել «ընդհանուր 30 թուպե» բառերով.</p>	
3.	<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Հովհաննիսյան</p>	<p>Նախագծի 16-րդ հոդվածը լրացնել նոր 1-ին և 2-րդ կետերով՝</p> <p>1) 3-րդ մասի առաջին նախադասությունը «համապատասխան» բառից հետո լրացնել «, բացառությամբ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու իրավունքը սահմանող դրույթների, որը կարգավորվում է սույն օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխան» բառերով.</p> <p>2) 3-րդ մասը երկրորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.</p> <p>«Մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը Գյումրու, Վանաձորի ավագանիների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու</p>	<p>ԸՆդունված է</p>

		<p>անդամի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակները կազմվում են 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի՝ ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան, որոնցում ընդգրկվում են սույն օրենսգրքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:</p> <p>Գյումրու, Վանաձորի ավագանիների, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններին դիտորդական առաքելությունների իրականացնող հասարակական կազմակերպությունների հավատարմագրումն իրականացվում է 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների դիտորդներից որակավորման վկայականներ չեն պահանջվում, իսկ սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը գործում է 2017թ. հունվարի 1-ից:».</p>	
--	--	--	--